Հաստատում եմ՝

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ծովակալ

Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոցի

Տնօրեն՝ _____ Տ. Հովսեփյան

«16» _____ 2023թ.

Դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան պլանը բխում է դասընթացի՝ դպրոցի կանոնադրությամբ ու պարտադիր կիրառվող ստանդարտներից և դպրոցի ռազմավարական զարգացման ծրագրից:

Հաստատեցի՝ մՅՈՒ գծով փոխտնօրեն՝ Գ. Չակորյան

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի մարզ — Վանաձոր համայնք

ծովակալ Իսակովի անվան թիվ 23 դպրոց
ուսումնական հաստատության անվանումը

VIբ
դասարանը

Նաիրա Սպարտակի Գաբրիելյան
դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

2023-2024 ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(*դասարանի ընդհանուր բնութագիրը)* –Դասարանում սովորում են 26 աշակերտ, որից 10 աղջիկ և 16 տղա: Դասարանում կա միակողմանի ծնողազուրկ երեխա՝ խնամակալի (հորաքրոջ*)* խնամքին: Ընդունակ և կարգապահ աշակերտներ են, ուսման մեջ ետ մնացող չկա: Կոլեկտիվը համերաշխ է:
2. Ռազմահայրենասիրական դաստիարակություն - Այսօր մեր երկրում ռազմահայրենասիրական դաստիարակությունը ամենակարևոր ուղղությունն է, առավելևս, 44-օրյա պատերազմից հետո, երբ անհրաժեշտ է վերականգնել կոտրված բարոյահոգեբանական նկարագիրը: Այդ նպատակով նախատեսում եմ շարունակական զրույցներ, միջոցառումներ: Պետք է երեխաների գիտակցությանը հասցնել այն, որ լավ արարքը, խնամքով վերաբերմունքը շրջապատին, բնությանը, մշակութային ժառանգությանը, քաղաքավարությունը ևս հայրենասիրություն են;
3. Ֆիզիկական դաստիարակություն – Երկրին նվիրված քաղաքացի, ներդաշնակ անձ ձևավորելու համար անհրաժեշտ է մտքով և մարմնով առողջ սերունդ դաստիարակել. Այդ նպատակով պետք է խրախուսել առողջ ապրելակերպը, երեխաների ներգրավվածությունը տարբեր սպորտային խմբակներին, հետևել, որ նրանք հետևեն անձնական հիգիենայի կանոններին;
4. Աշխատանքային դաստիարակություն –Անհրաժեշտ է հարգանք ձևավորել աշխատանքի նկատմամբ; Դասարանում սահմանել ամենօրյա հերթապահություն, կազմակերպել շաբաթօրյակներ դասարանում և

դպրոցամերձ տարածքում: Տանը օգնեն ծնողներին տնային գործերում, հավաքեն իրենց աշակերտական անկյունը և հարդարեն անկողինը:

5. Հոգևոր դաստիարակություն – Հարուստ ներաշխարհ, լայն աշխարհայացք, բազմակողմանի զարգացած անհատ, մեծահոգություն, լավատեսություն, ընկերասիրություն՝ սրանք են այն բարձր արժեքները, որոնք սերմանում է հոգևոր դաստիարակությունը; Դրան կարելի է հասնել ճիշտ ընտրված թեմաներով զրույցների, ճաշակով միջոցառումներ, ընթերցանության միջոցով; Տարածված տարբեր վնասակար աղանդներից երեխաներին զերծ պահելու համար լինել ուշադիր և հետևողական;
6. Գեղագիտական դաստիարակություն – Ընդհանուր առմամբ գռեհիկ և անճաշակ իրականության մեջ դժվար է դաստիարակել և ձևավորել գեղագիտական ճաշակ, բայց հնարավոր է՝ դպրոցում, տանը միասնական պահանջների առկայության դեպքում; Անհրաժեշտ է կազմակերպել էքսկուրսիաներ, այցելություններ տարբեր ցուցահանդեսներ, պատկերասրահ: Այցելել մանկական և տիկնիկային թատրոններ, դիտել մանկական ներկայացնումներ և քննարկել: Գեղագիտական դաստիարակչության շրջանակում օգտագործել ԿԳՄՍ նախարարության կողմից սովորողներին տրվող աբոնեմենտային տոմսերը ՝այց կազմակերպել թատրոն , թանգարան , պատկերասրահ :
7. Բնապահպանական դաստիարակություն – Էքսկուրսիաների և զրույցների միջոցով երեխաներին ծանոթացնել բնությանն ու շրջակա միջավայրին, խնամել դպրոցամերձ ծաղկանոցի ծաղիկները: Տանը ունենալ <<Կանաչ անկյուն>> և խնամել այն: Օգնել <<թևավոր>> բարեկամներին, հատկապես ձմռանը: Հետևողականորեն պետք է սեր ձևավորել ու զարգացնել դեպի բնությունը, շրջակա միջավայրը;
8. Դպրոց – ընտանիք կապը – Լիարժեք դաստիարակության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ դպրոցն ու ընտանիքը միասնական են պահանջների, նպատակների սահմանման մեջ; Անհրաժեշտ է

ուսումնասիրել յուրաքանչյուր աշակերտի ընտանեկան պայմանները, անհրաժեշտության դեպքում օգնել մեթոդական խորհուրդներով, կազմակերպել զրույցներ և ծնողներին ներգրավել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
Սեպտեմբեր 01.09.2021	Գիտելիքի օր	Դասղեկ	
1-ին շաբաթ	Կազմակերպչական հարցերի քննարկում,դասարանի ակտիվի ընտրություն	Դասղեկ	
2-րդ շաբաթ	Զրույց աղջիկների հետ անձնական հիգիենայի, վարքի կանոնների մասին	Դասղեկ	
3-րդ շաբաթ	Զրույց նվիրված ՀՀ Անկախության օրվան	Դասղեկ	
4-րդ շաբաթ	Զրույց տղաների հետ անձնական հիգիենայի, վարքի կանոնների մասին	Դասղեկ	
5-րդ շաբաթ	Զրույց մեր քաղաքի մասին	Դասղեկ	
6-րդ շաբաթ	Զրույց <<Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի>> թեմայով	Դասղեկ	
7-րդ շաբաթ	«Աշխարհն իմ շուրջը» թեմայով բանավեճ	Դասղեկ	
8-րդ շաբաթ	Առաջին երկամյակի արդյունքների քննարկում	Դասղեկ	
9-րդ շաբաթ	«Շրջակա միջավայրի մաքրությունը» թեմայով զրույց	Դասղեկ	
10րդ շաբաթ	Զրույց-քննարկում «Մեր իրավունքներն ու պարտականությունները» թեմայով	Դասղեկ	
11րդ շաբաթ	Զրույց կիբերանվատանգության, սոցցանցերում հաղորդակցության մշակույթի և վարքականոնների մասին	Դասղեկ	
12րդ շաբաթ	«Հանդուրժողականության ձևավորում» թեմայով զրույց	Դասղեկ	
13րդ շաբաթ	Զրույց-քննարկում «Ինչպես պաշտպանվել բնական և մարդածին աղետներից» թեմայով	Դասղեկ	
14րդ շաբաթ 15րդ շաբաթ	Զրույց <<Մասնակցություն , ակտիվ քաղաքացիական դիրքորոշում>> թեմայով Պատրաստվում ենք ամանորին	Դասղեկ Դասղեկ	
16րդ շաբաթ	Կարգապահական հարցերի քննարկում	Դասղեկ	
18-րդ շաբաթ	«Առողջ մարմնում առողջ հոգի» թեմայով քննարկում	Դասղեկ	
19-րդ շաբաթ	Անվտանգ երթևեկության կանոնների հիշեցում ֆիլմի դիտում և քննարկում:	Դասղեկ Զինղեկ	

	Ծանոթացնել դպրոցի տարհանման պլանին:		
20-րդ շաբաթ	«Հայոց բանակը մեր լինելիության երաշխիքն է» թեմայով զրույց-քննարկում	Դասղեկ	
21-րդ շաբաթ	Քաղաքացիական պաշտպանություն նրա նպատակը խնդիրները	Դասղեկ	
22-րդ շաբաթ	Մասսայական խոցման ժամանակակից տեսակները	Դասղեկ	
23-րդ շաբաթ	Մասսայական խոցման ժամանակակից տեսակների ազդեցությունը մարդու վրա	Դասղեկ	
24-րդ շաբաթ	Մասսայական խոցման ժամանակակից տեսակներից պաշտպանությ միջոցառումները	Դասղեկ	
25-րդ շաբաթ	Անհատական պաշտպանության միջոցներ	Դասղեկ	
26-րդ շաբաթ	Անհատական պաշտպանության միջոցների սանիտարահամաճարակային անվտանգության կանոններ		
27-րդ շաբաթ	Անհատական պաշտպանության միջոցների հագնել և հանելու կանոններ	Դասղեկ	
28-րդ շաբաթ	Տեղանքին բնորոշ հնարավոր վթարներից և աղետնկերից պ;աշտպանվելու կանոններ	Դասղեկ	
29-րդ շաբաթ	Զրույց «Գեղեցիկը իմ պատկերացմամբ» թեմայով	Դասղեկ	
30-րդ շաբաթ	Կոլեկտիվ ներկայացման դիտում և քննարկում:	Դասղեկ	
31-րդ շաբաթ	Զրույց «Բարեկիրթ վարվեցողություն տանը, դպրոցում,հասարակական վայրերում» թեմայով:	Դասղեկ	
32-րդ շաբաթ	Զրույց «Մեր հաղթանակների թեմայով»	Դասղեկ	
33-րդ շաբաթ	Զրույց «Իմ ընկերը» թեմայով	Դասղեկ	
34-րդ շաբաթ	Զրույց «Կարծրատիպերի առաջացման պատճառները	Դասղեկ	
35-րդ շաբաթ	Դասագրքերի հանձնման գործընթաց		

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկիզբ

1. Վերստուգել կամ կազմել աշակերտների անվանացանկը
2.Վերստուգել կամ կազմել դասարանի սոցիալական անձնագիրը
3. Սպառիչ տեղեկություններ հավաքել աշակերտների ՝ լրացուցիչ կրթական հաստատություններում մասնակցության մասին
4. Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան

Ամենօրյա աշխատանքներ

1. Էլեկտրոնային մատյանում նշել բացակաները
2.Հետևել կարգապահությանը
3.Հետևել հերթապահությանը դասարանում

Շաբաթվա աշխատանքներ

1. Անցկացնել դասղեկական ժամեր
2. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

Ամենամյա աշխատանքներ

1. Նախապատրոստել և կազմակերպել սովորողների մասնակցությունը դպրոցական գործընթացներին
2. Օգնել դասարանական խորհրդին ՝ ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը
3. Վերահսկել դասարանի սովորողների մասնակցությունը խմբակներում և նախագծային աշխատանքներում
4. Դուրս բերել սովորողների բացակայությունները և գնահատականները:
5. Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից , հարցաշարից , ախտորոշման այլ միջոցներից , դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակական աշխատանքում
6. Դուրս բերել նույն առարկայից 3 և ավելի անբավարար գնահատական ստացած սովորողների անունները
7, Իրականացնել դիտարկումներ ուղղված սովորողների մեջ ԿԱՊԿ ունեցողների բացահայտմանն և մասնակցություն գնահատմանը և ԱՈԻՊ –ների մշակմանը
8, Դժվար դաստիարակվող աշակերտների բացահայտում,համապատասխան կանխարգելիչ և շտկողական աշխատանքներ ընտանիք-դպրոց –հոգեբան կապի միջոցով.

Ծնողական ժողովների թեմատիկան

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
Օգոստոս	1.Կազմակերպչական հարցեր 2. դասագրքերի բաշխում	Դասղեկ	
Հոկտեմբեր	1.Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում 2.Հոգեբանական ,կարգապահական խնդիրների դիտարկում,քննարկում և լուծման տարբեր տարբերակների կիրառում: 3. Երկամսյակի քննարկում	դասղեկ հոգեբան	
Հունվար	1.1-ին կիսամյակի ամփոփում 2. Ընթացիկ հարցեր	Դասղեկ	
Մարտ	1.3-րդ երկամսյակի ամփոփում 2. Ընթացիկ հարցեր	Դասղեկ	
Մայիս	Ուսումնական տարվա ամփոփում	Դասղեկ	